

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ  
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴ**

6 հուլիսի 2021թ.

N 50 - Լ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ՈՒԺԸ  
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Սույն որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվում մինչև «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) 2020 թվականի օգոստոսի 25-ի նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցումը «Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՀԱԱ) խորհրդի կողմից կարգերի (կանոնակարգերի) վերաբերյալ ընդունված որոշումները՝ համաձայն Հավելվածի, որոնք փոխարինվել են Պալատի խորհրդի որոշումներով ընդունված նոր կարգերով (կանոնակարգերով):
2. Սույն որոշման Հավելվածում նշված ՀՀԱԱ կարգերի (կանոնակարգերի) գործողությունը սահմանափակվում է մինչև Պալատի փոխարինող կարգերի (կանոնակարգերի) ուժի մեջ մտնելը, եթե այլ բան նախատեսված չէ Պալատի փոխարինող կարգերով (կանոնակարգերով) կամ Պալատի ներքին իրավական այլ ակտերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

## Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ  
հաշվապահների պալատ»

հասարակական կազմակերպության խորհրդի  
2021թ. հուլիսի 6-ի N 50 - Լ որոշման

Հ/Հ	ՀՀԱԱ կարգ (կանոնակարգ)	Պալատի փոխարինող կարգ (կանոնակարգ)
1	Որակավորման համակարգի կանոնակարգ	Աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագիրը (այդ թվում՝ քննական առարկաների կազմը) և որակավորման քննությունների անցկացման կարգ
2	Քննությունների անցկացման կարգ	Աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագիրը (այդ թվում՝ քննական առարկաների կազմը) և որակավորման քննությունների անցկացման կարգ
3	Որակավորման քննություններից ազատումներ շնորհելու կարգ	Աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների որոշակի առարկաներից ազատման կարգ
4	Որակավորման նպատակով մասնագիտական աշխատանքային փորձառության պահանջների և գնահատման կարգ	Աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում ստանալու համար անհրաժեշտ աշխատանքային փորձին վերաբերող պահանջները և որակավորման տրման կարգ
5	Ժողովների անցկացման կարգ	Ընդհանուր ժողովի անցկացման և պատվիրակների ընտրության կարգ
6	Պատվիրակների ընտրության կարգ	Ընդհանուր ժողովի անցկացման և պատվիրակների ընտրության կարգ
7	Հեռակա ժողովի անցկացման կարգ	Ընդհանուր ժողովի անցկացման և պատվիրակների ընտրության կարգ

8	Հանձնաժողովների հիմնական դրույթներ	Պալատի հանձնաժողովների կանոնադրություններ
9	ՀՀԱԱ ՇՄՁ գործառույթների կարգ	Աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների ՇՄՁ կարգ